Կ՝ 7300

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«26» 06 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 179 - 25

Նախաձեռնող՝ *«ՆՈՐ ՀԱՃՆ ՀԻԼԼՍ» ՍՊԸ*
Կոտայքի մարզ, Նոր Հաճըն, Հ. Անդրանիկի փ., /8/3

Գործունեությունը՝ *Նոր Հաճըն բնակավայրի Հ. Անդրանիկի փողոց 8/3 հասցեում բնակելի համալիրի կառուցում*
Կոտայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 179 - 25

«26» հունվարի **2025թ.**

Նոր Հաճըն բնակավայրի Զ. Անդրանիկի փողոց 8/3 հասցեում բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՆՈՐ ՀԱՃՆ ՀԻԼԼՍ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Նոր Հաճըն համայնք, Նոր Հաճըն բնակավայր

Ներածական մաս. «ՆՈՐ ՀԱՃՆ ՀԻԼԼՍ» ՍՊԸ-ն նախատեսում է Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Նոր Հաճըն բնակավայրում իրականացնել բնակելի համալիրի կառուցման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 12112024-07-0151 վկայականը, Նոր Հաճընի համայնքապետարանի կողմից տրված N 150 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող բնակելի համալիրի գտնվում է Կոտայքի մարզի Նոր Հաճըն բնակավայրի Զ. Անդրանիկի փողոց թիվ 8/3 հասցեում: Տարածքը սահմանափակված է Երկրապահների, Եղիշե Չարենցի և Զորավար Անդրանիկի փողոցներով:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղակայված է Կոտայքի հրաբխային սարավանդի հարավային մասում՝ Հրազդան գետի կիրճի աջ բարձրադիր ափին՝ հարթության վրա: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1339.0-1339.7 մետրերի սահմաններում:

Նախատեսվող գործունեության տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցեն դարակարգի հրաբխային արմատական ապարները՝ բազալտները, որոնց ծածկում են էլյուվիալ-դելյուվիալ նստվածքները կավային գրունտների տեսքով և տեխնածին առաջացումները:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ, առուներ, տարածքում գրունտային ջրերը գտնվում են ցածր հորիզոններում: Համաձայն ներկայացված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրեր մինչև 50 մ խորությունների վրա չեն հայտնաբերվել: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Կառուցապատման ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ կարստ, սողանք, քարաթափություն, փլուզում և այլն բացակայում են:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված կենդատեսակները և բուսատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները: Գործունեության ենթակա տարածքը չի առնչվում պատմամշակութային արժեք ունեցող բնության հուշարձանների, հատուկ պահպանվող տարածքների հետ:

Կառուցապատվող տարածքում հողաբուսական շերտի հզորությունը կազմում է 0.3-0.4 մետր, որի համար նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Նախատեսվում է 2 շենքից բաղկացած բնակելի համալիր, յուրաքանչյուր շենքը 11 վերգետնյա և 1 ստորգետնյա հարկով: Շենքերի 1-ին հարկերը նախատեսվում են հասարակական նշանակության, կոմերցիոն բնույթի, մնացած 10 հարկերը՝ բնակելի: Հասարակական հատվածը հագեցած կլինի բնակիչներին անհրաժեշտ սպասարկող ծառայություններով և օբյեկտներով:

Նախատեսվող 2 շենքերը կունենան դալանային հատված, որի բարձրությունը կհասնի 4,7 մ-ի, ինչը կապահովի հրշեջ մեքենաների անարգել տեղաշարժը:

Ստորգետնյա ավտոկայանատեղիում ավտոճանապարհը նախատեսվում է միակողմանի երթևեկությամբ՝ շրջանցիկ, ըստ նորմատիվ պահանջների՝ նախատեսվում է նաև հակահրդեհային, ծխահեռացման, հրդեհամարման, օդափոխության, արտակարգ իրավիճակի ազդարարման համակարգեր, հակահրդեհային դարպասներում՝ վթարային ելքեր:

-1 հարկում նախատեսված են՝ 2 պոմպակայան, էլ. ենթակայան, սանհանգույցներներ, յուրաքանչյուր սանհանգույցի հատվածում մեկ Ս/Հ սակավաշարժ խմբի համար, հեծանիվների կայանատեղի, կենցաղային, ապաստարանի կահավորման պարագաների պահեստավորման և տեխնիկական սենյակներ: -1 ստորգետնյա հարկում կնախատեսվի 195 ավտոկայանատեղի, որից 10-ն՝ անվասայլակով տեղաշարժվող մարդկանց համար: Նախատեսված կլինի նաև 16 լիցքավորման կայան՝ էլեկտրական մեքենաների համար: -4.900 նիշում առկա նկուղային հարկը կլինի երկակի գործառնական նշանակության:

Յուրաքանչյուր շենքում նախատեսվում է անհատական օդափոխության համակարգով 210 բնակարաններ: Տանիքը նախատեսվում է հարթ, ջրահեռացումը՝ ներքին:

Բնակելի համալիրի ±0,000 նիշում նախատեսվում են մուտքային հանգույցներ, վթարային ելքեր, բնակելիից առանձնացված մուտքերով հասարակական տարածքներ: Մուտքային հանգույցները սակավաշարժ խմբի համար կլինեն թեքահարթակներով:

Բոլոր աստիճանավանդակների դռները (փախուստի ելքերը) կլինեն հակահրդեհային և ինքնափակվող:

Բնակելի շենքի տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողի մակերես՝ 10489.5 մ²,
- կառուցապատման մակերես՝ 4432.0 մ² (42,3%),
- անջրանցիկ մակերևույթների մակերես՝ 1845.4 մ² (17.6%),
- կանաչապատման մակերես՝ 4212.1 մ², (40.1 %),
- ստորգետնյա կառուցապատման մակերես՝ 9882 մ²:

Նախատեսվում է 195 ստորգետնյա, 37 վերգետնյա, ընդհանուր՝ 232 ավտոկայանատեղիներ:

Հասարակական տարածքի յուրաքանչյուր շենքի մակերեսը կազմում է 1700.0 մ², ընդհանուր մակերեսը՝ երկու շենքերում միասին՝ 3400.0 մ², շինարարական ընդհանուր մակերեսը՝ 53982 մ²:

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է իրականացնել Կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N 426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան, որոնցից են՝ երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանները, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացումը և այլն:

Բնակելի համալիրի գազամատակարարումն իրականացվելու է՝ համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, գազի միացումը նախատեսվում է Արզնի գազատարից:

Բնակելի համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը իրականացվելու է՝ համաձայն «ՀԱՃԸՆ ՋՈՒՐ» ՀՈԱԿ-ի կողմից տրված տեղեկանքի, ջրամատակարումը նախատեսվում է իրականացնել Ազատամարտիկների փողոցից Սարգիս Ջուլֆյան թաղամասով անցնող ընդհանուր ջրագծից, ջրահեռացումը՝ ներքին ցանցից մինչև Ազատամարտիկների և Չարենց փողոցների հատման տարածքին հարակից ընդհանուր կոյուղատարին՝ կոյուղագծով միանալով:

Բնակելի համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվելու է՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և անձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Շինարարության ընթացքում պահանջվող ժամանակավոր ջուրը նախատեսվում է վերցնել տարածքին մոտ գտնվող «ՀԱՃԸՆ ՋՈՒՐ» ՀՈԱԿ-ին պատկանող ջրատարից, հոսանքը՝ մոտակա էլ. ենթակայանից:

Նախատեսվող գործունեության ընթացքում հողային զանգված առաջանալու է շենքերի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հանվող գրունտի ծավալը կկազի 62,700 մ³, որից 8622 մ³-ը կօգտագործվի որպես հետլիցք, իսկ ավելցուկային՝ 54078 մ³ ծավալով գրունտը, կտեղափոխի համայնքի կողմից շինարարական թույլտվությունով հատկացված վայր: Հողի բերրի շերտի առավելագույն ծավալը կկազմի 3329 մ³: Հողի բերրի շերտի պահեստավորումը իրականացվելու է շին. հրապարակում, առանձնացված վայրում, որտեղ կուտակված հողի բերրի շերտը կսահմանագծվի ժապավենով՝ հողագրունտի և շինարարական թափոնների հնարավոր աղտոտումը բացառելու համար, կծածկվի անջրաթափացան թաղանթով, հողի լվացումը և տարածումը կանխելու նպատակով և այլն:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Գործունեության տարածքում առկա են քանդման ենթակա շինություններ, քանդման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ: Օդային ավազան արտանետումները քանդման և շինարարության փուլերում կապված կլինեն տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման, ճանապարհների օգտագործման) ժամանակ առաջացող փոշու հետ:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդի) պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են՝

-շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում գրունտի խոնավեցում, ճանապարհների ջրցանի իրականացում,

- շինհրապարակի ցանկապատում, փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով՝ կառուցվող շենքերի ծածկում համապատասխան բարձրության ցանցով,

- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխում փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաների փակում անջրթափանց թաղանթով,

- շինհրապարակում սորուն նյութերի պահում ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ և ծածկում անջրթափանց պոլիէթելենային թաղանթով,

- օգտագործվող տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների միայն սարքին վիճակում օգտագործում, արտանետման խողովակների վրա զտիչների տեղադրում,

- փոշենստեցման համար ջրցանի այնպիսի իրականացում, ինչը հնարավորինս չի չառաջացնի մակերևութային հոսքեր,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկում համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարական հոսքաջրերի համար ժամանակավոր սեպտիկ հորի կառուցում և այլն:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, որի մաքրումն իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Տարածքում բանեցված յուղերի և քսայուղերի պահում չի նախատեսվում: Ենթակայանը տեղադրվելու է տակդիրի վրա, ինչը բացառելու է հնարավոր վթարների դեպքում արտահոսքերի առաջացումը:

Շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով:

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունները նվազեցնելու համար նախատեսված բնապահպանական միջոցառումները ներառված են նաև բնապահպանական կառավարման պլանում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Համաձայն գնահատման հաշվետվության՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը

շինհրապարակի հարակից տարածքում չի գերազանցելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Նախատեսվում են նաև մարդու առողջության, աշխատանքի անվտանգություն, արտակարգ իրավիճակների կանխարգելման մի շարք միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում:

Գործունեության իրականացման ընթացքում՝ քանդման և շինարարության փուլերում առաջացող թափոնատեսակները հետևյալն են՝ կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի/, եռակցման խարամ, յուղոտված լաթեր, շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողագրունտ: Թափոնների կառավարման նպատակով նախատեսվում է շինարարական աշխատանքների ընթացքում քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում նշված նյութերի պահում հատուկ անթափանց և փակ տարաներում (ավազե, մետաղական կամ բետոնե հիմքերի վրա), ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային ծածկույթի հնարավոր աղտոտման ռիսկերը, քանդման արդյունքում առաջացած թափոնների տեսակավորում, առանձնացում, առանձին թափոնատեսակների՝ մետաղական մասերի, փայտի մանցորդների, տանիքի ծածկի և այլն հանձնում համապատասխան մասնագիտական կազմակերպությունների, առանձին պիտանելի թափոնների օգտագործում շինարարության փուլում, կառուցապատման փուլում կենցաղային աղբի կուտակում պլաստիկ աղբահավաք տարողությունների մեջ և այլ:

Թափոնների ծածկագրերի, վտանգավորության դասի, ֆիզիկական բնութագրերի, քանակների վերաբերյալ տեղեկատվություններն առավել մանրամասն ներակայցված է գնահատման հաշվետվության համապատասխան բաժնում:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվում է իրականացնել կանաչապատման աշխատանքներ: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են ծառատնկման և սիզամարգերի միջոցով՝ Նոր Հաճընի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն: Նախատեսվում է իրականացնել կազմակերպված ոռոգման ցանց և ոռոգում ցնցուղային եղանակով:

Բնակելի համալիրի կառուցման ավարտից հետո իրականացվելու է տարածքի բարեկարգման, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացման, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժման, ճանապարհների կարգաբերման, տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելմանն, մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, փոշենստեցման նպատակով տարվա շոգ և չոր եղանակներին տարածքի ջրցանի իրականացում՝ օրական 2-3 անգամ հաճախականությամբ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, նորատունկ ծառերի մշտադիտարկումներ, կպչողականություն չապահովող ծառատեսակների փոխարինում նորերով, կենսաբազմազանության մշտադիտարկումները ՝ տարին մեկ հաճախականությամբ և այլն:

Շինարարության ընթացքում մշտադիտարկումների միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 600000 ՀՀ դրամ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆՉԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և լսումներն իրականացվել են Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի ղեկավարի նստավայրում:

Հանրային լսումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, Նոր Հաճըն համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ-ում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
5. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներին համապատասխան: Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Նոր Հաճըն համայնքապետարանի հետ համաձայնեցված:

6. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
7. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՆՈՐ ՀԱՃՆ ՀԻԼԼՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Նոր Հաճըն բնակավայրի Զ. Անդրանիկի փողոց 8/3 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան